«Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ»

(Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1955 թ., 180 էջ)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակությամբ լույս տեսավ երջանկահիշատակ Գեորգ Զ. հայրենասեր Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը ընդգրկող շքեղ հատորը։

Գիրքը, որը գրված է Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայ հավատացյալների ցանկությամբ, մի ընտիր, գեղեցիկ ծաղկեփունջ է, նվիրված հանգուցյալ Հայրապետի ազնիվ և անմահ հիշատակին։

Հատորի համար հիմնականում առաջ է հանդիսացել «Էջմիածին» ամսագրի 1954 և 1955 թվականների մի շարք համարներում լույս տեսած՝ հանգուցյալ Հայրապետի կենսագրությունը։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հանգուցյալ Վեհափառ Հայրապետի նկարներից հետո գրքի առաջին մի քանի էջերում տեղավորված է Գերագույն Հոգևոր Խորհրդի «Երկու խոսք»ը, ուր լուսաբանված են գրքի հրատարակման դեղեցիկ շարժառիթները։ Գիրքը բաղկացած է երկու մասերից. առաջին մասը՝ Վեհափառի կյանքն ու գործունեությունը, երկրորդ մասը՝ հավելված։

Առաջին մասը բաժանված է հետևյալ 12 գլուխներին.

1. Մանկությունը և դաստիարակությունը։

2. Նոր-Նախիջևանում պաշտոնավարած տարիները։

3. Աշխատանքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում։

4. Տեղակալական շրջանը։

5. 1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողովը և Նորին Ս. Օծության ընտրությունը։

6. Կաթողիկոսական օծումը։

7. Վեհափառը և Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը։

8. Վեհափառը և մեր ազգային-եկեղեցական թեմերը։

9. Վեհափառը և «Էջմիածին» ամսագիրը։

10. Վեհափառը և խաղաղության համաշխարհային շարժումը։

11. Վեհափառը և Մայր Տաճարի վերանորոգությունը։

12. Վեհափառի մահը և թաղումը։

Այս 12 գլուխների մեջ, մաս առ մաս, մանրամասն ամփոփված են երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության բնորոշ գծերը՝ սկսած նրա մանկությունից մինչև ցավալի մահը։

Կենսագրական մասում օգտագործված են մեծ թվով արխիվային վավերաթղթեր։ Այն տեղ է հատկացված Վեհափառի կաթողիկոսական շրջանին, ուր նրա անդուլ, մեղվաջան և անձնվեր գործունեության լիակատար բնորոշմամբ, վեր է հանված հայրենասեր, եկեղեցասեր և ժողովրդանվեր մեծ Հայրապետի առաքինի և անբասիր նկարագիրն ու վարքը։

Հատորի երկրորդ մասը (հավելվածը), պարունակում է Գեորգ Զ. Կաթողիկոսի հայրենասիրական կոչերն ու կոնդակները, որոնք իրենց դաղափարական բովանդակությամբ խտացնում են հանգուցյալ Հայրապետի ջերմ հայրենասիրությունը, բնորոշում նրան որպես հայ ժողովրդի դարավոր ազգային արժեքների, կուլտուրայի և մշակույթի նախանձախնդիր և պաշտպան Հայրապետի, ինչպես հայ ժողովրդի ավանդական վաղեմի նվիրական սրբությունների, քրիստոնեական վեհ իդեալների լավագույն տարածողի և ջատագովի։

Հատորի վերջում, հանգուցյալ Վեհափառի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողների գործը ավելի դյուրացնելու համար, տեղավորված է երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի «Էջմիածին» ամսագրում 1944—1954 թվականների ընթացքում տպագրված հայրենասիրական կոնդակների և կոչերի համառոտ բիբլիոգրաֆիան։

Հրատարակված հատորը ճոխ նկարազարդված է. նրանում ժամանակագրական կարգով տեղ են գտել հանգուցյալ Հայրապետի հետաքրքիր կյանքի վերաբերյալ բազմաթիվ բնորոշ նկարներ, փաստաթղթերի ֆոտոպատճեններ։

Գիրքն ունի լավագույն գեղարվեստական ձևավորում։ Խորհրդատս, մտածված և ընտրված են գլխագրերն ու վերջնագրերը։ Գրքի տպագրությունը կատարված է լավորակ թղթի վրա։ Կազմը շքեղ է։

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ջանքերով լույս ընծայված վերոհիշյալ հատորը հայ հավատացյալ ժողովրդի երախտագիտական զգացմունքների լավագույն արտահայտությունն է անմոռանալի Գեորգ Զ. Կաթողիկոսի հավետ պայծառ հիշատակին։

Բ. Մ.